ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ՀՀՖՆ ԲՀՀԱՇՁԲ-3/14-1>>

ք. Երևան 23 օգոստոսի 2014թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ֆիլիշին>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս.Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ք. Երևան, Մ.Ադամյան 1 հասցեում գտնվող ՀՀ ՖՆ վարչական շենքի ընթացիկ նորոգման /մանրահատակի փոխարինման/ աշխատանքներ աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի տեխնիկական բնութագրին և ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2014թ. դեկտեմբերի 20-ը:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և

անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն, Հավելված N 4) ստորագրմամբ:

Աշխատանքի կատարման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.
2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային

փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

4.7 Պատվիրատուի կողմից աշխատանքները փուլերով ընդունելու դեպքում, եթե Պատվիրատուի կողմից հայտնաբերվում են նախկինում ընդունված աշխատանքների վերաբերյալ անհամապատասխանություններ, ապա Պատվիրատուն իրավունք ունի կատարել անհրաժեշտ փոփոխություններ նախկինում ընդունված աշխատանքները արձանագրած փաստաթղթերում (կատարողական ակտ, հանձնման-ընդունման ակտ և այլն)՝ այդ մասին տեղեկացնելով Կապալառուին:

Այն դեպքում, երբ նման փոփոխությունները հանգեցրել են նախկինում ընդունված աշխատանքների համար վճարված գումարի փոփոխության անհրաժեշտության, ապա Կապալառուի կողմից հերթական հանձնման-ընդունման ակտով ներկայացված աշխատանքների համար Պատվիրատուն վճարում է՝ նվազեցնելով վճարման ենթակա գումարը անհամապատասխանության չափով:

Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի կատարման համար պայմանագրի գինը վճարել է ամբողջությամբ, ապա Կապալառուն պարտավոր է վճարել Պատվիրատուին սահմանված գումարը այդ մասին պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 233 374 420.44 ՀՀ դրամ (երկու հարյուր երեսուներեք միլիոն երեք հարյուր յոթանասունչորս հազար չորս հարյուր քսան ՀՀ դրամ քառասունչորս լումա), որից 38 895 736.74 ՀՀ դրամը (երեսունութ միլիոն ութ հարյուր իններսունհինգ հազար յոթ հարյուր երեսունվեց ՀՀ դրամ յոթանասունչորս լումա)՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ 46 674 884 (քառասունվեց միլիոն վեց հարյուրյոթանասունչորս հազար ութ հարյուր ութսունչորս) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝

որպես կանխավճար՝ սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված համաձայնագիրը կնքվելու և Կապալառուի կողմից կանխավճարի ապահովում ներկայացվելու դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կնքվելիք համաձայնագրով սահմանվող վճարման ժամանակացույցով նախատեսվող ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար կնքվելիք համաձայնագրով սահմանվող ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքները կկատարվեն այդ նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու և կողմերի միջև լրացուցիչ համաձայնագիր կնքվելու դեպքում:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

8.5 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

8.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.8 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.9 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն	Ֆիլիշին ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Ադամյան 1	ՀՀ Տավուշի մ., գ. Հաղարծին, 1-ին փ. 10-րդ փակ. 15
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 07905342
Հ/Հ 900011017101	Հ/Հ 2472300335960010
Կենտրոնական գանձապետարան	Արդշինինվեստբանկի Երեբունի մ/ճ
գործառնական վարչություն	
Աշխ.ղեկավար Ա.Արզումանյան	Տնօրեն Հ.Հակոբյան

Հավելված թիվ 1

23.08.2014 թ.

կնքված աշխատանքների կատարման

թիվ << ՀՀՖՆ ԲԸՀԱՇՁԲ-3/14-1>> գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ք.Երևան, Մ.Ադամյան 1 հասցեում գտնվող ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքի աշխատասենյակների և միջանցքի հին մաներահատակի քանդման և նորի տեղադրմանընթացիկ նորոգման աշխատանքների

Ընդհանուր մակերեսը-5583.39 քմ.

160 մմ հաստությամբ, 800 մմ լայնությամբ կաղնու փայտից մաներատախտակի իրականացում.

Միջհարկային ծածկերի փայտե կրող կոնստրուկցիաների իրականացում.

Հարկերի կառուցվածքը՝ ըստ գործող նորմերի, կանոնների և նախագծի.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ք. Երևան, Մ.Ադամյան 1 հասցեում գտնվող ՀՀ ՖՆ վարչական շենքի ընթացիկ նորոգման /մանրահատակի փոխարինման/ աշխատանքների կատարման

NN	Աշխատանքների անվանումը	Չ/Մ	Ծավալը	Միավորի արժեքը /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6
	Հին մանրահատակի քանդում և նոր մանրատակի տեղադրում Չափաբաժին 1				
1	Գոյություն ունեցող մանրատախտակների քանդում	քմ	1,718.59	612.32	1052327.03
2	Գոյություն ունեցող հիմնատակի (տախտակամածի) տախտակների քանդում	քմ	1,718.59	526.76	905284.47
3	Գոյություն ունեցող շրիշակների քանդում	մ	1,804.52	13.11	23657.25
4	Շինաղբի հավաքում, տեղափոխում, բարձում ա/մ աշխ 0,81+0,15	տ	139.21	2098.29	292102.95

5	Շինաղբի տեղափոխում տարածքից դուրս թափոնակույտ	տ	139,21	3434.76	478152.94
6	Տափազերանի (լրացուցիչ) տեղադրում	թմ	1,718.59	3377.72	5804915.81
7	Տափազերանների և փայտե հիմնահատակի մշակում հակամիջատային և հակահրդեհային նյութով	թմ	1,718.59	2318.89	3985221.17
8	Տախտակամածի նոր տախտակների 50,0մմ հաստ տեղադրում	թմ	171.86	9264.13	1592133.38
9	Տախտակամածի հին տախտակների վերատեղադրում խթացումով աշխ 0,67+0,25=0,92	թմ	1,546.73	2253.08	3484906.43
10	Երկու շերտ երբատախտակի տեղադրում 9,0մմ հաստ. 2 շերտ (18,0մմ)	թմ	1,718.59	7726.53	13278737.19
11	Կաղնեփայտե մանրատախտակներով (17մմ հաստ, 75մմ լայն,) հատակների իրականացում շրիչակներով	թմ	1,718.59	10901.07	18734469.89

12	Մանրատախտակից հատակների տաշում և հղկում	քմ	1,718.59	574.84	987914.28
13	Մանրատախտակից հատակների լաքապատում	քմ	1,718.59	2066.73	3551861.51
	Հին մանբահատակի քանդում և նոր մանրատակի տեղադրում Չափաբաժին 2				0.00
1	Գոյություն ունեցող մանրատախտակների քանդում	քմ	1,523.76	612.32	933028.72
2	Գոյություն ունեցող հիմնատակի (տախտակամածի) տախտակների քանդում	քմ	1,523.76	526.76	802655.82
3	Գոյություն ունեցող շրիշակների քանդում	մ	1,599.95	13.11	20975.34
4	Շինաղբի հավաքում, տեղափոխում, բարձում ա/մ աշխ 0,81+0,15	տ	123.42	2098.29	258970.95

5	Շինաղբի տեղափոխում տարածքից դուրս թափոնակույտ	տ	123.42	3434.76	423918.08
6	Տափագերանի (լրացուցիչ) տեղադրում	քմ	1,523.76	3377.72	5146834.63
7	Տափագերանների և փայտե հիմնահատակի մշակում հակամիջատային և հակահրդեհային նյութով	քմ	1,523.76	2318.89	3533431.83
8	Տախտակամածի նոր տախտակների 50,0մմ հաստ տեղադրում	քմ	152.38	9264.13	1411668.13
9	Տախտակամածի հին տախտակների վերատեղադրում խթացումով աշխ 0,67+0,25=0,92	քմ	1,371.38	2253.08	3089828.85
10	Երկու շերտ նրբատախտակի տեղադրում 9,0մմ հաստ. 2 շերտ (18,0մմ)	քմ	1,523.76	7726.53	11773377.35
11	Կաղնեփայտե մանրատախտակներով (17մմ հաստ. 75մմ լայն.) հատակների իրականացում շրիչակներով	քմ	1,523.76	10901.07	16610614.42

12	Մանրատախտակից հատակների տաշում և հղկում	քմ	1,523.76	574.84	875918.20
13	Մանրատախտակից հատակների լաքապատում	քմ	1,523.76	2066.73	3149200.50
	Հին մանրահատակի քանդում և նոր մանրատակի տեղադրում Չափաբաժին 3				0.00
1	Գոյություն ունեցող մանրատախտակների քանդում	քմ	796.87	612.32	487939.44
2	Գոյություն ունեցող հիմնատակի (տախտակամածի) տախտակների քանդում	քմ	796.87	526.76	419759.24
3	Գոյություն ունեցող շրիշակների քանդում	մ	836.71	13.11	10969.27
4	Շինաղբի հավաքում, տեղափոխում, բարձում ա/մ աշխ 0,81+0,15	տ	64.55	2098.29	135444.62
5	Շինաղբի տեղափոխում տարածքից դուրս թափոնակույտ	տ	64.55	3434.76	221713.76

6	Տափագերանի (լրացուցիչ) տեղադրում	քմ	796.87	3377.72	2691603.74
7	Տափագերանների և փայտե հիմնահատակի մշակում հակամիջատային և հակահրդեհային նյութով	քմ	796.87	2318.89	1847853.87
8	Տախտակամածի նոր տախտակների 50,0մմ հաստ տեղադրում	քմ	79.69	9264.13	738258.52
9	Տախտակամածի հին տախտակների վերատեղադրում խթացումով աշխ 0,67+0,25=0,92	քմ	717.18	2253.08	1615863.91
10	Երկու շերտ նրբատախտակի տեղադրում 9,0մմ հաստ. 2 շերտ (18,0մմ)	քմ	796.87	7726.53	6157039.96
11	Կաղնեփայտե մանրատախտակներով (17մմ հաստ. 75մմ լայն.) հատակների իրականացում շրիշակներով	քմ	796.87	10901.07	8686735.65
12	Մանրատախտակից հատակների տաշում և հղկում	քմ	796.87	574.84	458072.75

13	Մանրատախտակից հատակների լաքապատում	թմ	796.87	2066.73	1646915.14
	Հին մանրահատակի քանդում և նոր մանրատակի տեղադրում Գափաբաժին 4				0.00
1	Գոյություն ունեցող մանրատախտակների քանդում	թմ	1,519.17	612.32	930218.17
2	Գոյություն ունեցող հիմնատակի (տախտակամածի) տախտակների քանդում	թմ	1,519.17	526.76	800237.99
3	Գոյություն ունեցող շրիշակների քանդում	մ	1,595.13	13.11	20912.15
4	Շինաղբի հավաքում, տեղափոխում, բարձում ա/մ աշխ 0,81+0,15	տ	123.05	2098.29	258194.58
5	Շինաղբի տեղափոխում տարածքից դուրս թափոնակույտ	տ	123.05	3434.76	422647.22

6	Տափագերանի (լրացուցիչ) տեղադրում	քմ	1,519.17	3377.72	5131330.89
7	Տափագերանների և փայտե հիմնահատակի մշակում հակամիջատային և հակահրդեհային նյութով	քմ	1,519.17	2318.89	3522788.12
8	Տախտակամածի նոր տախտակների 50,0մմ հաստ տեղադրում	քմ	151.92	9264.13	1407406.63
9	Տախտակամածի հին տախտակների վերատեղադրում խթացումով աշխ 0,67+0,25=0,92	քմ	1,367.25	2253.08	3080523.63
10	Երկու շերտ նրբատախտակի տեղադրում 9,0մմ հաստ. 2 շերտ (18,0մմ)	քմ	1,519.17	7726.53	11737912.58
11	Կաղնեփայտե մանրատախտակներով (17մմ հաստ. 75մմ լայն.) հատակների իրականացում շրիշակներով	քմ	1,519.17	10901.07	16560578.51
12	Մանրատախտակից հատակների տաշում և հղկում	քմ	1,519.17	574.84	873279.68

13	Մանրատախտակից հատակների լաքապատում	քմ	1,519.17	2066.73	3139714,21

Ընդամենը՝ 175 206 021.35 ՀՀ դրամ

Շահույթ 11%՝ 19 272 662.35

Ընդամենը՝ 194478683.70 ՀՀ դրամ

ԱԱՀ 20%՝ 38895736.74

Աշխատանքի ընդհանուր արժեքը՝ 233 374 420.44 ՀՀ դրամ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն

Ք.Երևան, Մ.Աղամյան 1

ՀՎՀՀ 02629081

Հ/Հ 900011017101

Կենտրոնական գանձապետարան

Գանձապետության վարչություն

Աշխ.ղեկավար _____ Ա.Արզումանյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ֆիլիշին ՍՊԸ

ՀՀ Տավուշի մ., գ. Հաղարծին, 1-ին փ, 10-րդ փակ. 15

ՀՎՀՀ 07905342

Հ/Հ 2472300335960010

Արդշինինվեստբանկի Երևանի մ/ճ

Տնօրեն _____ Մ.Հակոբյան

(ստորագրություն)

Հավելված թիվ 2

23.08 2014 թ.

կնքված աշխատանքների կատարման

թիվ ՀՀՖՆ ԲԸՀԱՇՁԲ-3/14-1 գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	Ք.Երևան, Մ.Ադամյան 1 հասցեում գտնվող ՀՀ ՖՆ վարչական շենքի ընթացիկ նորոգման /մանրահատակի փոխարինման/ աշխատանքների կատարում	233 374 420.44	համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	20/12/2014թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն

Ք.Երևան, Մ.Ադամյան 1

ՀՎՀՀ 02629081

2/2-90001101 7101

Գլխավոր հաշվապահ՝ Ա.Մարգումանյան

Աշխ.ղեկավար՝ Ա.Մարգումանյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ֆիլիշին ՍՊԸ

ՀՀ Տավուշի մ., գ. Հաղարծին, 1-ին փ, 10-րդ փակ. 15

ՀՎՀՀ 07905342

22224723003359600 10

Արդյունաբերական Էներգետիկայի մ/ճ

Տնօրեն՝ Ա.Հակոբյան

Հավելված թիվ 4
2014 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ ՀՀՖՆ ԲԸԱՀԱՇՁԲ-3/14-1> գնման պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Կատարողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.